Ե· ՏԱՐԻ ԹԻՒ 1137 ԵՐԵՔՇԱԲԹԻ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1879

# ԼՐԱԳԻՐ

ՅՆՈՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՆԻԿ· Մ· ԹՈՒԼՊԷՆՏՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ
Ղալաթիա Բէրչէմպէ Բազար Նոր խանի դէմը Սամուր փողոց Թիւ 12

## ԱԶԳԱՅԻՆ

ԹԵՐԹԸ 20 ՓԲ· ԱՐԾԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ոսկեդրամ
Կ· Պոլսոյ համար

| | | |
|---|---|---|
| Տարեկան | ՂՂ· | 100 |
| Վեցամսեայ | » | 50 |
| Եռամսեայ | » | 25 |

Գաւառաց, Արտասահմանաց և կամ օտար երկրի համար թղթատարութեան ծախքը բաժանորդաց վրայ է·

## ԱԶԳԱՅԻՆ

Մարդուս համար եթէ ամենէն անարգ բան մը կայ նէ՝ այն ալ իր գտնուած դիրքին ու պաշտօնին անարժան ընթացք մը և գործոյ մը մէջ գտնըւիլն է։

Ընթերցողք իմացան լրաթերթերէն Արզումանեան Ստեփան չը-վարդապետի Ս· Փրկչի Հիւանդանոցէն փախչիլն և այդ փախուստէն առաջ տեղի ունեցած գաղտնի թղթակցութիւնը Հասուն գերապայծառին հետ, զրոյցը արգիլմանէն ազատելու համար և Գեր· Հասունի ալ ղըրկած պատասխանը, որոյ վրայ հասաւ յիշեալ վարդապետին փախուստը։

Այն փախստեան մանրամասնութիւնքը, զորս առւ գեցինք արժանահաւատ և վաւերական աղբիւրներէ, ցոյց կ'տան թէ ինչ վատ միջոցներ ի գործ դըրուեր են յիշեալ բանտարկեալին փախուստը դիւրացնելու և ի գլուխ հանելու։

Ստեփան վարդապետ քեռորդի մ'ունենալով, սա յաճախ այցելութիւն կ'տայր վարդապետին, երբ սորա գաղտնի թղթակցութենէն յետոյ, Բերացի Հասունեան երիտասարդ մ'ալ արհեստիւ շապկաճի կ'ընկերանայ վարդապետին քեռորդւոյն հետ և կոկսին շարունակ միասին այցելել։

Հիւանդանոցի Հոգաբարձութիւնը լուր առնելով վարդապետին գաղտնի հաղորդակցութենէն, նամակ կ'գրէ Հիւանդանոցի տեսչին որ հսկողութեան միջոցներն կրկնապատկէ, նամակը եւ· գիշեր ժամը 4ին հանելով տեսչին ձեռքը, հետեւեալ առաւօտ կ'թողու հարկ եղածն ի գործ դնել, երբ առաւօտ կանուխ տեսնելով որ 2 այցելու Փրկչին դրնէն դուրս կելլեն, յայտնելով թէ նամակ առնելու եկեր են վարդապետէն, տեսուչը խոկոյն վարդապետին գտնուած Հիւանդանոցին յարկը կերթայ, և զանիկա չը գտնելով հոն Մամուրանը կ'վազէ, ուր տեղի գործաւոր տղայն ալ Մկրտիչ անուն՝ կ'յայտնէ թէ վարդապետը եկեր դուրս ելեր է, տեսուչը ուրիշ յարկ մ'ալ կերթայ, ուրկէ կիմանայ թէ վարդապետին Մամուրանը մըտնելը տեսնուեր է, իսկ դուրս ելնելը ոչ, տեսուչը նորէն Մամուրան կ'դառնայ և վերի կոտրած պատուհանը տեսնելով կիմանայ թէ վարդապետն անկէ [illegible] է։

Իսկոյն Մամուրանի գործաւոր տղան հարցաքննութեան կենթարկուի, որոյ խոստովանութիւններէն հետեւեալ պարագայներն ի վեր կելլեն։

Մամուրանի գործաւոր տըղայն, Մկրտիչ անուն, իբրև անառակ՝ Փրկիչ ղրկուած, և փախչելով նորէն բերուած 18 տարեկան պատանի մ'է, որ այժմ ամենայն հլութեամբ կ'աշխատէր Մամուրանը վարձու բըռնող տաճիկ վարպետին քով, ուրիշ 2 գործաւոր ընկերակից տղայք ալ ունենալով հետը։

Վարդապետը, շարունակ դիւրին այցելութիւններն ընելը շարունակելու պահուն, Մկըրտիչին հետ ալ մտերմութիւն մը փորձելով, պատմել կ'տայ իրեն թէ ասկէ առաջ ինչպէ՞ս և ո՞ր ճանբով փախած էր Փըրկիչէն, տղայն ալ պարզամտութեամբ կ'պատմէ եղածին պէս։ Վարդապետը տեսնելով որ Մամուրանի պատուհանէն զատ ուրիշ ապահով և յարմար ճանբայ չիկայ փախչելու, վերջին օրերս յիշեալ Բերայի շապկաճի երիտասարդին հետ միաբան իր գաղտնիքը կ'հաղորդէ Մըկըրտիչին թէ ինքը հոսկէ փախչելու կ'պատրաստուի, ուստի և փախուստը դիւրացնելու համար, Մկրտիչէն ալ օգնութիւնը կ'ուզէ։

Մկրտիչ առջի բերան դէմ կենալով, Բերացի հասունիստ երիտասարդը կըսէ թէ՝ վարդապետը ասկէ փախչելու համար արդէն ամեն բան պատրաստուած է, և եթէ ինքն Մամուրանի պատուհանը չյանձնէ՝ իրենք նաւու չուանէ սանդուխներ բերելով պատէն անդին պիտի անցնին, միայն թէ ինքը եթէ Մամուրանին պատուհանը իրենց տրամադրութեանը տալ զնէ՝ իրեն ալ այս ծառայութիւնը լիովին կ'վարձատրեն, ապա թէ ոչ թէ՝ [illegible] ինքը ձեռնունայն կ'մնայ։

Շատ մը թախանձանքներէ յետոյ, վերջապէս Մկրտիչ կը համոզուի, և կ'համաձայնի որ Մամուրանի տաճիկ վարպետին բացակայած գիշերը փախուստին գործը տեղի ունենայ, զի վարպետը շաբաթը մի անգամ իր տունը կերթայ։ Լրտեսներ դրուելով երբ կիմանան թէ տաճիկ վարպետը եւ· երեկոյ մեկներ է իր տունը, նոյն գիշերը փախստեան պատրաստութիւնը կ'տեսնեն։ Ուրբաթ առաւօտ կանուխ Մկրտիչ իր գործակից ընկերներէն մին եկեղեցի կ'ղրկէ, վարդապետն ալ միւսին ձեռքը քանի մը փարայ տալով կ'ղրկէ որ իրեն ծխախոտ առնէ բերէ, կ'մնան վարդապետն ու Մկրտիչը, նոյն պահուն դրսէն կառք մը կ'գայ կ'կենայ երկաթուղւոյ ճանբուն վրայ, յիշեալ պատուհանին դիմացօքը, կառքէն 3-4 հոգի դուրս կելնեն և կ'գան պատուհանին տակը կըսպասեն։

Նոյն միջոցին վարդապետն ալ քանի մը կտոր բան առնելով հետը, որոց մէջ կար լայնեզր գլխարկ մը և սև վերարկու մը՝ գօտիին մէկ կողմէն համրիչ մը կախուած ծայրը սև խաչով մը, (այդ ճիզուիթ կրօնաւորաց յատուկ սև զգեստն ու գլխարկը քանի մ'օր առաջ յիշեալ Բերացի հասունիստը բերեր յանձներ էր վարդապետին, որպէս զի անգամ մը ինքզինքը դուրս նետելուն պէս՝ յիշեալ զգեստը հագնի և ոչ ոք ճանաչելու ունենայ ձեռք դպչնելու իրեն,) Նշան մ'ընելուն վրայ Մկրտիչ պատուհանին ապակին կ'կոտրէ, վարդապետն ալ Մկրտիչին 2 մէճիտ տալէն յետոյ, գօտիին մէկ ծայրը պատուհանին շրջանակին կապելով միւս ծայրէն ինքզինքը վար կ'իջեցնէ, և կառքը կ'մտնեն։

[illegible] Մամուրանը [illegible] մանէ, իսկ Մկրտիչ կ'ճանբէ զանի խաբելով թէ վարդապետը դուրս ելած է, վասն զի դեռ նոր փախած ըլլալով տղան կ'կարծէ եղեր որ եթէ անմիջապէս իմացուի, իսկոյն ետեւէն մարդ հասցնելով կրնայ բռնուիլ, ուստի ժամանակ վաստըկելու համար վարդապետին, խաբեր է տեսուչը պահ մը, և այն առեն երեւան ելեր է գործը երբ փախստականն արդէն ապահով ճանբան մտեր էր։

ԱՐԴ, այս պարագաներն իմանալով մարդ, բնականաբար պիտի ստիպուի մակաբերել ու հետեւցնել թէ, գործոյն մէջ Բերայի Շապկաճի և ուրիշ մի քանի սինլքոր հասունեանք իբր դերակատար գտնուելնուն հակառակ, այս փախստեան գործը աւելի բարձր տեղէ մը թելադրուած ու պատրաստուած է, զի ինչո՞ւն պէտք շապկաճի մը և կամ իրեն պէս մի քանի քանի ուրիշ անձանց, որք այդքան ջանք և ճիգ թափեն՝ եկեղեցւոյ օրինաց հակառակ գործելուն համար կարգազուրկ եղած, և պատժոյ համար Հիւանդանոցը արգիլեալ մեղապարտ և յանցաւոր հայ վարդապետ մը փախցնելու, որոյ ոչ հոն մնալէն իրենց վնաս մ'ունէր, և ոչ ալ փախուստը իրենց այնքան մեծ շահ մը կ'բերէր։

